15.qxd 25/07/2025 15:52 Page 1

ԳԵՂԱՄԱ աշխատք

Քաղաքական, հասարակական, մշակութային թերթ 25 հուլիսի 2025թ. թիվ 15 (619)

ՀԱՆԴԻՍԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ԲԱՑՎԵՑ ՍԵՎԱՆԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ

2025 թվականի հուլիսի 13–ին տեղի է ունեցել «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցներով կառուցված Սեւանի Վ. Սարգսյանի անվան երաժշտական դպրոցի նոր շենքի բացման պաշտոնական արարողությունը, որին ներկա է եղել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Երաժշտական դպրոցի նորակառույց շենքի բացմանը մասնակցել են նաեւ ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը, ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը, ՀՀ–ում Ֆրանսիայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Օլիվիե Դըկոտինյին, Սեւան համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արթուր Մարգարյանը, Հայաստան համահայկական հիմնադրամի եւ հիմնադրամի Ֆրանսիայի կոմիտեի կազմակերպության անդամներ, համայնքային եւ պետական իշխանությունների ներկայացուցիչներ, դպրոցի ուսուցիչներն ու աշակերտները:

Կառավարության ղեկավարն իր խոսքում շնորհակալություն է հայտնել նվիրատու ընտանիքներին, նրանց ներկայացուցիչներին, «Հայաստան» համահայկական հիմնադրամին եւ հիմնադրամի Ֆրանսիայի գրասենյակին: Վարչապետի խոսքով՝ դպրոցի կառուցման ծրագիրը Կառավարության եւ Սփյուռքի գործակցության տիպային օրինակ է: Երկրի ղեկավարն ընդգծել է նաեւ, որ կառավարության ատեստավորման ծրագրի շնորհիվ երաժշտական դպրոցի մի շարք ուսուցիչների աշխատավարձերն էականորեն բարձրացել են:

Վարչապետը կարեւորել է երեխաներին ուղղված Կառավարության ուղերձը, թե ինչի համար է կրթությունը, կրթության ոլորտում կապիտալ ներդրումներն ու կրթվելու պատշաճ պայմաններ ստեղծելը կարեւոր եւ առանցքային:

Նիկոլ Փաշինյանը նշել է, որ դրան է միտված «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագիրը, որի շուրջ կոնկրետացել են կառավարության ռազմավարական պատկերացումները:

Երկհարկանի երաժշտական դպրոցի կառուցման շինարարական աշխատանքների համար ծախսվել է ավելի քան 344 միլիոն դրամ: Շենքի կառուցման ծրագիրն իրականացրել է «Հայաստան» համահայկական հիմնադրամը, իսկ երաժշտական գործիքներն ու տեխնիկական այլ սարքավորումները հատկացրել է ՀՀ կառավարությունը: Ընդհանուր առմամբ դպրոցից կարող է օգտվել մոտ 230 աշակերտ: Այն ապահովված է ջրամատակարարման, կոյուղու, ջեռուցման հակահրդեհային օդափոխության, գազամատակարարման, էլեկտրամատակարարման ժամանակակից համակարգերով: Դպրոցն ունի 102 տեղանոց համերգասրահ, 23 դասարան: Իրականացվել են նաեւ տարածքի ցանկապատման, բարեկարգման եւ կանաչապատման աշխատանքներ, վարչապետի հանձնարարականով որպես առաջնահերթություն ասֆալտապատվել ու բարեկարգվել է դպրոց տանող ճանապարհը:

Դպրոցի համերգասրահն անվանակոչվել է ֆրանսահայ բարերար Էդուարդ Մանուկյանի անունով:

Մեծ է Սեւանի երաժշտական դպրոցի կառուցման մեջ «Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ, ֆրանսահայ բարերար Պետրոս Թերզյանի ներդրումը, ով հայտնեց, որ ծրագիրն իրականություն դարձավ Ֆրանսահայ բարերարներ Ալբերտ եւ Անտուան Ներսեսյան եղբայրների թողած ժառանգության, ինչպես նաեւ Ժընըվիեւ Կոնսուլյանի նվիրատվության շնորհիվ:

/շարունակությունը՝ էջ 2-ում/

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԸ ԽՐԱԽՈՒՍԵԼ Է ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ՄԱՄՆԱԿԻՑ ՊԱՀԵՍՏԱԶՈՐԱՅԻՆՆԵՐԻՆ

Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը մարզպետի աշխատակազմի վարչական շենքում ընդունել ու մարզպետի շնորհակալագրով խրախուսել է 2025 թվականի վարժական հավաքների ընթացքում աչքի ընկած պահեստազորայիններ Գեւորգ Ղազարյանին, Մակեդոն Ազիզյանին, Էմին Յավրյանին, Ռաֆիկ Խաչատրյանին, Իշխան Սարգսյանին, Ազնաուր Խաչատրյանին եւ Արգամ Անտոնյանին:

Խրախուսման արարողությանը մասնակցել են Գեղարքունիքի մարզի զինվորական կոմիսար, գնդապետ Արմեն Մնացականյանը եւ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Տիգրան Հակոբյանը:

Պարտաճանաչ ու օրինակելի ծառայության համար շնորհակալություն հայտնելով պահեստազորայիններին՝ մարզպետ Կարեն Սարգսյանը հույս է հայտնել, որ վարժական հավաքների մասնակից պահեստազորայինների անձնուրաց ու պարտաճանաչ ծառայությունը կդառնա օրինակ մյուսներին՝ խթանելով պետության սահմանների պահպանության գործում կամավոր մասնակցելու ցանկությունը:

ՔԱՆԱԳԵՂ ՀՆԱՎԱՅՐԻ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ

Քանագեղ հնավայրը տարածվում է Սեւանա լճի արեւմտյան ափին, Սեւան-Գավառ-Մարտունի մայրուղու արեւելյան ու արեւմտյան կողմերում, Գավառ քաղաքից մոտ 12 կիլոմետր դեպի հարավ-արեւելք, Գեղարքունիք եւ Կարմիրգյուղ բնակավայրերի վարչական տարածքների սահմանաբաժանի վրա:

Դժվար է հստակեցնել, թե ժամանակին որքան տարածք է զբաղեցել այս հնավայրը, քանի որ 1980-ական թվականներին այստեղ կառուցված Գավառ-Մարտունի ավտոմայրուղին երկու մասի է բաժանել այն, ինչից էլ առաջին իսկ հայացքից տպավորություն է ստեղծվում, որ Քանագեղ ամրոց-բնակատեղիի սահմանները գտնվում են միայն մայրուղու արեւելյան կողմում, Սեւանա լճի ափամերձ հատվածում: Մինչդեռ ուշագրավ զննությունը բերում է այն համոզման, որ Քանագեղը, սկսվելով Սեւանա լճի արեւմտյան ափի միջնամասում գնվող հրվանդանից, տարածվել է դեպի արեւմուտք հարյուրավոր, գուցեեւ հազարավոր մետրերով՝ իր մեջ ներառելով հնագույն դամբարաններ, կիկլոպյան ամրոցի, միջնադարյան գյուղատեղիի մնացորդներ, մատուռ ու եկեղեցի, բարձրարվեստ խաչքարեր ու տապանաքարեր եւ գրեթե մեկ դար առաջ կառուցված անասնագոմեր:

ՀՆԱԳԵՏ ԱՇՈՏ ՓԻԼԻՊՈՍՅԱՆԸ ԵՎ ԱՐՇԱՎԱԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ ՔԱՆԱԳԵՂ ՀՆԱՎԱՅՐԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

Որոշ պատմաբանների ու հնագետների կարծիքով՝ այս տարածքը ժամանակին գտնվել է Վանի թագավորության սեպագիր արձանագրություններում հիշատակվող Վելիքուխի եւ Տուլիխու երկրների սահմանագծին: Նրանից հյուսիս, ոչ շատ հեռու, տարածվում են Ղումլուղի ամրոցն ու դամբարանադաշտը, Արծվաթռիչ մատուռը, Ագարակ միջնադարյան գյուղատեղին, Սալոյի վանքը, իսկ դեպի հարավարեւմուտք՝ Ցամաք ավերակ կոչվող գյուղատեղին եւ Սուրբ Գեւորգ մատուռը: Պատմամշակութային նույն միջավայրում է գտնվում նաեւ շուրջ 10 կմ դեպի արեւմուտք տեղակայված Մրթբի ձոր հնավայրը՝ իր կիկլոպյան ամրոցով ու հնագույն, ընդարձակ դամբարանադաշտով: Հենց Քանագեղի արեւմտյան կողմում, մոտ 2 կիլոմետր հեռավորությամբ էլ վերջերս հնասեր Թաքուլ Տոնոյանը հայտնաբերեց ցլակերպ վիշապաքար, ինչը փաստում է այն մասին, որ այս հնավայրը բնակեցված է եղել մեզանից շուրջ չորսհինգ հազարամյակ առաջ:

/շարունակությունը՝ էջ 4-ում/

15.qxd 25/07/2025 15:52 Page 2

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՏԵՐԱՆ ՄԵԽԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԸ ԲՈԼՈՐԵԼ Է ԿՅԱՆՔԻ 104-ՐԴ ՏԱՐԻՆ

Հայրենական մեծ պատերազմի ու երկրորդ աշխարհամարտի մասնակից, Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Սարուխան գյուղի բնակիչ Մեխակ Ավետիսյանը բոլորել է իր կյանքի 104-րդ տարին, ինչի առիթով էլ նրան այցելել են Գավառի մարզային գրադարանի աշխատակիցները, ինչպես նաեւ՝ լրագրողներ Չինաստանից:

Ինչպես տեղեկացրեց Գեղարքունիքի Վարդգես Պետրոսյանի անվան մարզային գրադարանի տնօրեն Մարիամ Համբարձումյանը, Գեղարքունիքի մարզային գրադարանի աշխատակիցները հուլիսի 14-ին այցելեցին Հայրենական Մեծ պատերազմի վետերան, մանկավարժ եւ գրող Մեխակ Ավետիսյանին՝ շնորհավորելու նրա ծննդյան 104-րդ տարեդարձը:

Մեխակ Ավետիսյանը զորակոչվել է Խորհրդային բանակ 1940 թվականին եւ մասնակցել Հայրենական Մեծ պատերազմի ամենածանր ու հերոսական ճակատամարտերին: Նրա մարտական ուղին Հյուսիսային Կովկասից հասել է մինչեւ Մերձբալթիկա, որտեղ էլ նա դիմավորել է մայիսի 9-ի հաղթանակը: Այնուհետեւ իր ծառայությունը շարունակել է Կուռլանդական թերակղզում եւ մասնակցել է ճապոնական բանակի դեմ գործողություններին Չին-մոնղոլական սահմանին: 1946 թվականին հայրենիք վերադարձած Մեխակ Ավետիսյանը պարգեւատրվել է «Հայրենական մեծ պատերազմի երկրորդ աստիճանի», «Կարմիր աստղի», «Աշխատանքային կարմիր դրոշի» շքանշաններով, ինչպես նաեւ բազմաթիվ մեդալներով:

Մեխակ Ավետիսյանը երկար տարիներ դասավանդել է Սարուխանի թիվ 1 դպրոցում՝ որոշակի ժամանակահատվածում ստանձնելով նաեւ տնօրենի պաշտոնը: Վերջին տարիների գրքեր է հեղինակել գյուղի պատմության եւ Արցախյան 44-օրյա պատերազմում զոհված իր ծոռան ու նրա համադարանցի մարտական ընկերների մասին:

-Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 80-ամյակի կապակցությամբ Մեխակ Ավետիսյանին էին այցելել նաեւ Չինաստանից ժամանած լրագրողներ՝ շնորհավորելու եւ հարցազրույց անցկացնելու նպատակով, ինչը վկայում է նրա հերոսական անցյալի նկատմամբ միջազգային հետաքրքրության եւ հարգանքի մասին: Այս հանդիպումը դարձավ ոչ միայն երախտագիտության արտահայտություն, այլեւ պատմական հիշողության պահպանման յուրահատուկ խորհրդանիշ,- ներկայացրեց Մարիամ Համբարձումյանը:

«Գեղամա աշխարհ»

ԳԱՎԱՌՈՒՄ ՅՈՒՅԱԴՐՎԵԼ Է ՄԱՔԵՆՅԱՅ ՎԱՆՔՈՒՄ 1496 ԹՎԱԿԱՆԻՆ ՍՏԵՂԾՎԱԾ ՁԵՌԱԳԻՐ ՄԱՏՅԱՆ

Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի նախաձեռնությամբ եւ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի աջակցությամբ Գեղարքունիքի մարզի Լեւոն Քալանթարի անվան դրամատիկական թատրոնում տեղի է ունեցել հայագիտական միջազգային կոնգրեսի ամփոփիչ նիստը, որի ընթացքում միջոցառման մասնակիցներին է ներկայացվել Մատենադարանի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու Արփենիկ Ղազարոսյանի «Գեղամա երկրի գրչության կենտրոնները եւ ձեռագրական ժառանգությունը» մենագրությունը: Միաժամանակ ցուցադրվել է բացառիկ ձեռագիր Ավետարան, որն ստեղծվել է Մաքենյաց վանքում, 1496 թվականին:

Գրքում ներկայացված են Սեւանի ավազանի գրչության կենտրոնների պատմությունը եւ մեզ հասած ձեռագրական հարուստ ժառանգությունը: Հատուկ ընդգծվել է Սեւանավանքի՝ որպես ուսումնական եւ գրավոր մշակույթի կենտրոնի նշանակությունը:

Մենագրությունը նախատեսված է հայ մշակույթի պատմությամբ զբաղվող մասնագետների, ուսանողների եւ հայոց պատմությամբ հետաքրքրվողների համար:

Միջոցառմանը մասնակցել են Երեւանի Մեսրոպ մաշտոցի անվան Մատենադարանի տնօրեն Արա Խզմալյանը, Սփյուռքն ու Հայաստանի հանրապետությունը ներկայացնող հայագետներ, Գավառի կրթամշակութային հաստատությունների ներկայացուցիչներ, Գավառի պետական համալսարանի աշխատակիցներ, ուսանողներ եւ շրջանավարտներ:

Գրքի մեկ օրինակ նվիրվել է Գավառի պետական համալսարանի գրադարանին:

«Գեղամա աշխարհ»

ՄԵԿՆԱՐԿԵԼ ԵՆ ՄԱՐՏՈՒՆԻ-ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ ՄԱՐԶԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքում ՀՀ ՏԿԵ պատվիրատվությամբ ու պետբյուջեի տրամադրած միջոցներով մեկնարկել են Մարտունի-Ներքին Գետաշեն մարզային նշանակության ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչությունից, Մարտունի-Ներքին Գետաշեն ավտոճանապարհի հիմնանորոգման ծրագրի նախահաշվային արժեքը կազմել է 1 միլիարդ 10 միլիոն դրամ, պայմանագրային արժեքը՝ 737 միլիոն 700 հազար դրամ:

Ծրագրով նախատեսվում է հիմնանորոգել Մարտունի-Ներքին Գետաշեն ավտոճանապարհի երթեւեկելի մասը՝ 3,4 կիլոմետր երկարությամբ եւ 35 հազար քառակուսի մետր մակերեսով, երկշերտ ասֆալտբետոնյա ծածկի տեղադրմամբ, նույն ճանապարհին իրար կապող Արգիճի գետի կամուրջը, կառուցել 2 կիլոմետր 300 մետր երկարության ու շուրջ 5000 քառակուսի մետր մակերեսով սալիկապատ մայթեր ու ջրահեռացման համակարգ:

Ճանապարհի հիմնանորոգվող մասը սկսվում է Մարտունի քաղաքի երաժշտական դպրոցի մոտից ու ավարտվում Ներքին Գետաշենի թիվ 2 միջնակարգ դպրոցի դիմացի խաչմերուկում:

Ծրագիրը նախատեսված է ավարտի հասցնել 250 օրվա ընթացքում: Շինարարական աշխատանքներն իրականացնում է «Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ն:

ՎՈԼԵՅԲՈԼԻ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՀԱՂԹՈՂ Է ՃԱՆԱՉՎԵԼ ԳԱՎԱՌԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԹԻՄԸ

Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Պ. Ղանդիլյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցի մարզադահլիճում անցկացվեցին սիրողական վոլեյբոլի մարզային առաջնության եզրափակիչ հանդիպումները, որոնց արդյունքում հաղթող ճանաչվեց Գավառի համայնքապետարանի թիմը:

Մրցաշարի մասնակից ութ թիմերից եզրափակիչ փուլ էին դուրս եկել ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության մարզային վարչության, ՀՀ ՊՆ բանակային երկրորդ կորպուսի, Գավառի եւ Ճամբարակի համայնքապետարանների թիմերը:

3-րդ տեղի համար մրցել են ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության մարզային վարչության եւ ՀՀ ՊՆ բանակային 2-րդ կորպուսի թիմերը: 2:1 հաշվով հաղթել են փրկարարները եւ տիրացել երրորդ մրցանակին:

Իսկ եզրափակչում մրցել են Գավառի եւ Ճամբարակի համայնքապետարանների թիմերը: 2:0 հաշվով հաղթելով մրցակցին՝ Գավառի համայնքապետարանի թիմը նվաճել է գլխավոր մրցանակը, իսկ Ճամբարակի թիմը գրավել է երկրորդ տեղը:

Մրցաշարի ամփոփմանը մասնակցել է Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը: Նա շնորհակալություն է հայտնել բոլոր թիմերին ու մրցավարներին՝ ակտիվ մասնակցության համար, շնորհավորել հաղթողներին եւ ընդգծել, որ նման մարզական միջոցառումները խթանում են առողջ ապրելակերպը:

Բոլոր թիմերը ստացել են մասնակցության հավաստագրեր, իսկ մրցանակակիրները՝ գավաթներ եւ դրամական պարգեւներ:

ՀԱՆԴԻՍԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ԲԱՑՎԵՑ ՍԵՎԱՆԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՑՅ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ

/սկիզբը՝ էջ 1-ում/

Սեւան համայնքի ավագանու որոշմամբ ֆրանսահայ բարերար, «Հայաստանե համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ Պետրոս Թերզյանը Սեւան համայնքի Վ. Սարգսյանի անվան երաժշտական դպրոցի նոր շենքի կառուցման գործում ունեցած ակնառու ներդրման, համայնքի մշակութային կյանքի զարգացմանը նպաստելու համար արժանացավ «Սեւան քաղաքի պատվավոր քաղաքացի» կոչմանը:

Երաժշտական դպրոցի նոր շենքի կառուցման ծրագիրը իրողություն դարձավ Սեւան համայնքի ղեկավար Սարգիս Մուրադյանի եւ «Հայաստան» համահայկական հիմնադրամի արդյունավետ համագործակցության շնորհիվ:

Երաժշտական դպրոցի նոր շենքի շինարարական աշխատանքները մեկնարկել էին 2023 թվականի մայիս ամսից, եւ երկու տարի անց արձանագրում ենք, որ շնորհիվ լավագույն գործընկերների Սեւանն ստանում է անգնահատելի նվեր:

Սեւան համայնքը հայտնում է իր շնորհակալությունն ու երախտագիտությունը «Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամներին, աշխատակազմին, բարերարներին, ՀՀ կառավարությանը, որոնց ջանքերի շնորհիվ հնարավոր դարձավ եւս մեկ համայնքապահպան ու համայնքաշեն ծրագիր դարձնել իրողություն:

Նույն օր Հայաստան համահայկական հիմնադրամի եւ հիմնադրամի Ֆրանսիայի կոմիտեի կազմակերպության ներկայացուցիչներն ունկնդրեցին Սեւանի երաժշտական դպրոցի առաջին համերգը նոր ու գործող շինարարական նորմերին եւ կանոններին համապատասխան շենքի համերգասրահում:

Արմինե Ղուկասյան

15.qxd 25/07/2025 15:52 Page 3

ԳԱՎԱՌ-ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՄԱՐԶԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԾՐԱԳԻՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ Է ՇՈՒՐՋ 80 ՏՈԿՈՍՈՎ

2023 թվականի հոկտեմբերի կեսերից պետբյուջեի միջոցներով մեկնարկել եւ ընթանում են Գավառ-Գեղարքունիք մարզային նշանակության 12,9 կիլոմետր երկարության ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքները, որոնք արդեն իրականացվել են շուրջ 80 տոկոսով:

Ինչպես տեղեկացրեց ճանապարհաշինական աշխատանքներն իրականացնող «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ գլխավոր ճարտարագետ Բաղդասար Նազեյանը, Գավառ-Գեղարքունիք ավտոճանապարհի հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 3 միլիարդ 235 միլիոն դրամ, որն ամբողջությամբ հատկացվում է պետբյուջեի միջոցներից:



Ծրագրով նախատեսված է հին ասֆալտեբոնյա ծածկի հեռացում, խճավազային հիմքի, ավազակոպճային շերտի, ասֆալբետոնյա երկշերտ նոր ծածկի տեղադրում՝ 12,9 կիլոմետր երկարությամբ եւ 91 հազար քառակուսի մետր մակերեսով, ջրահեռացման համակարգի կառուցում երկաթբետոնյա ծածկած վաքերով, որոնք միաժամանակ կծառայեն որպես մայթեր, Գավառ քաղաքի տարածքում 900 մետր երկարությամբ հեղեղատարկոյուղու կառուցում:

2025 թվականի հուլիսի 21-ի դրությամբ արդեն իրականացվել է 2 միլիարդ 590 միլիոն 800 հազար դրամի ճանապարհաշինական աշխատանքներ, որոնց արդյունքում 12,9 կիլոմետր երկարության ճանապարհի երթեւեկելի մասն ասֆալտապատվել է 12,2 կիլոմետր երկարությամբ ու 85 հազար 640 քառակուսի մետր մակերեսով, կառուցվել է Գավառ քաղաքի հեղեղատար կոյուղին: Ծրագրով նախատեսված 15 հազար 885 քառակուսի մետր մակերես ունեցող մայթերից սալիկապատվել է 12 հազար 438 քառակուսի մետրը, իսկ ասֆալտապատվող 15 հազար 693 քառակուսի մետր մայթերից ասֆալտապատվել է 8594 քառակուսի մետրը:

-Ճանապարհաշինական աշխատանքները ավարտի կհասցվեին նախորդ տարեվերջին, եթե չխանգարեին ճանապարհի վրա իրականացվող ջրամատակարարման ու ջրահեռացման աշխատանքները: Առաջիկայում Գավառ քաղաքի Հացառատ թաղամասում կմեկնարկի կոյուղագծի կառուցումը, որի ավարտից հետո մենք էլ մեր հերթին կսկսենք ու կավարտենք մեր աշխատանքները,- ներկայացրեց Բաղդասար Նազեյանը:

Հիմնանորոգվող ճանապարհի շուրջ 8 կիլոմետրն անցնում է Գավառ համայնքի Գեղարքունիք, Լանջաղբյուր, Սարուխան, Գանձակ գյուղերի եւ Գավառ քաղաքի ներսով:

ԾՈՎԱԳՅՈՒՂՈՒՄ ՏՐՎԵԼ Է ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԵԿՆԱՐԿԸ

Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի Ծովագյուղ գյուղում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականինի իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում տրվել է ճանապարհաշինական աշխատանքների մեկնարկը:

Ծովագյուղի փողոցների հիմանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 288 միլիոն 959 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Սեւանի համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսվում է Ծովագյուղի 1-ին փողոցի 1-ին եւ 2-րդ նրբանցքների, 2-րդ փողոցի մի մասի, 4-րդ փողոցի 1-ին փակուղու, 11-րդ փողոցի, 17-րդ փողոցի, 18-րդ փողոցի 1-ին նրբանցքի, 20-րդ փողոցի 1-ին փակուղու, 24-րդ փողոցի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ նրբանցքների, գերեզմանոցի հարակից տարածքի, Աստվածընկալի տարածքի եւ 1-ին թաղամասի ճանապարհների ասֆալտապատում՝ շուրջ 5 կիլոմետր 856 մետր երկարությամբ եւ 23 հազար 427 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով:

Շինարարական աշխատանքներն իրականացնում է «Ծովագյուղի ՃՇՇ» ընկերությունը:

Ճանապարհաշինական աշխատանքները Ծովագյուղում նախատեսված է ավարտել այս տարվա ընթացքում:

Արմինե Ղուկասյան

ՍԵՎԱՆԻ ԱՓԱՄԵՐՋ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԸՆԹԱՆՈՒՄ ԵՆ ՋՐԱԾԱԾԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՆՏԱՌՆԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

2025 թվականի ապրիլ ամսից «Սեւան Ազգային պարկ»-ի Մարտունու տեղամասում սկսվել եւ ընթանում են Սեւանա լճի ափամերձ տարածքների ջրածածկման ենթակա անտառների մաքրման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրեց «Սեւան Ազգային պարկ» ՊՈԱԿ տնօրեն Կարեն Մնացականյանը, 2025 թվականի ապիլից մինչ հուլիս ամիսն ընկած ժամանակահատվածում ջրածածկման ենթակա շուրջ 10 հեկտար անտառային տարածքներ մաքրվել են ծառերից, արմատներից, թփերից ու բուսական այլ համակեցություններից:

Աշխատանքներն իրականացվում են «Սեւան Ազգային պարկ»-ի տեխնիկական միջոցներով: Գործի է դրվել 1 ամբարձիչ, 1 էքսկավատոր, 1 թրթուրավոր տրակտոր, 1 բեռնատար մեքենա: Մաքրման աշխատանքներն իրականացվում են Վաղաշեն գյուղից մինչ Երանոս ընկած անտառային տարածքներում: Մաքրման աշխատանքները կշարունակվեն նաեւ այս տարվա հետագա ամիսների ընթացքում:

«ՍԵՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ»-Ի ԱԽԹԱՄԱՐԻ ՏԵՂԱՄԱՍՈՒՄ ԿԱՏԱՐՎԵԼ Է 8 ՀԵԿՏԱՐ ԾԱՌԱՏՈՒՆԿ

2025 թվականի ապրի-մայիս ամիսներին «Սեւան Ազգային պարկ»-ի Ախթամարի տեղամասում կատարվել է 8 հեկտար ծառատունկ:

Ինչպես տեղեկացրեց «Սեւան Ազգային պարկ» ՊՈԱԿ տնօրեն Կարեն Մնացականյանը, ծառատունկն իրականացվել է «Կովկասի բնության հիմանդրամ»-ի հետ համագործակցությամբ: Անտառվերականգման ծրագրի շրջանակներում տնկվել է վեց հազարական կեչու, վայրի խնձորենու, կովկասյան տանձենու եւ հացենու տնկիներ: Խնամքի աշխատանքները եւս իրականացվում են է «Կովկասի բնության հիմանդրամ»-ի աջակցությամբ: Տնկիները, ըստ մշտադիտարկումների, կենսունակ են հետագա աճի եւ զարգացման համար:

ԾՈՎԱԶԱՐԴՈՒՄ ԸՆԹԱՆՈՒՄ ԵՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Ծովազարդ գյուղում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում ճանապարհաշինական աշխատանքներ են ընթանում Ավետիք Իսահակյան եւ Զորավար Անդրանիկ փողոցներում:

Ծովազարդի Ավետիք Իսահակյան եւ Զորավար Անդրանիկ փողոցների հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 62 միլիոն 642 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Գավառի համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսվում է Իսահակյան եւ Զորավար Անդրանիկ փողոցների ասֆալտապատում՝ 870 մետր երկարությամբ եւ 4541 քառակուսի մետր մակերեսով: Զորավար Անդրանիկ փողոցում, որի հիմնանորոգվող հատվածի երկարությունը 486 մետր է, աշխատանքներն ավարտական փուլում են. կատարվել են հողի շերտի քանդում, ավազակոպճային եւ ասֆալտբետոնյա ծածկի տեղադրում: Կառուցվել է նաեւ ջրահեռացման համակարգ:

380 մետր երկարությամբ Ավետիք Իսահակյան փողոցում էլ աշխատանքները նոր են մեկնարկել: Այժմ կատարվում է ճանապարհի երթեւեկելի մասի արտաքին շերտի քանդում:

Շինարարական աշխատանքներն իրականացնում է «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ն:

Ճանապարհաշինական աշխատանքները Ծովազարդում կավարտվեն հուլիս ամսի ընթացքում:

Ալվարդ Մանուկյան

ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎԵԼ ԵՆ ՀԱՅՐԱՎԱՆՔԻ ԴԱՇՏԱՅԻՆ ԵՎ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑՆԵՐԸ

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Հայրավանք գյուղում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում մեկնարկել եւ ընթանում են Դաշտային եւ Վազգեն Սարգսյան փողոցների հիմնանորոգման աշխատանքները:

Հայրավանքի Դաշտային եւ Վազգեն Սարգսյան փողոցների հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 76 միլիոն 46 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Գավառի համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է Դաշտային եւ Վազգեն Սարգսյան փողոցների հիմանորոգում՝ 832 մետր երկարությամբ եւ 5153 քառակուսի մետր մակերեսով, ջրահեռացման համակարգի կառուցմամբ: Այս պահին ընթանում են ճանապարհների հողային հարթեցման եւ ջրահեռացման համակարգի կառուցման աշխատանքներ:

Շինարարական աշխատանքներն իրականացնում է Գավառի ՃՇՇ ԲԲԸ-ն:

Շինարարությունը ավարտի կհասցվի հուլիս ամսի ընթացքում:

Ալվարդ Մանուկյան

15.qxd 25/07/2025 15:52 Page 4

ՔԱՆԱԳԵՂ ՀՆԱՎԱՅՐԻ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ

/սկիզբը՝ էջ 1-ում/

Գավառ քաղաքից արեւելք տարածված հնավայրերի այս խիտ ցանցը պարզորոշ հուշում է, որ Սեւանա լճին մոտիկ գտնվող այս սարահարթը միշտ եղել է խիտ բնակեցված, ինչի համար կարեւոր նախապայմաններ են հանդիսացել ջրային միջավայրն ու կենդանական աշխարհը, ինչպես նաեւ՝ միջազգային ճանապարհների հանգույցում գտնվելը:

Քանագեղի բրոնզեդարյան-երկաթեդարյան ամրոցի մասին արժեքավոր տեղեկություն է թողել հայտնի հնագետ Գեդեոն Միքայելյանը՝ «Սեւանի ավազանի կիկլոպյան ամրոցները» պատմագիտական ուսումնասիրության մեջ. «**Քանագեղի ամրոց-շենը գտնվում է Կամո քաղաքից հարավ, 12 կիլոմետր հեռավորությամբ, ուր կա մի միջնադարյան ավերված գյուղատեղի, որն այժմ Կարմիրգյուղի կոլտնտեսությունն օգտագործում է որպես անասունների ձմեռանոց: Այս վայրը, ուր գտնվում է միջնադարյան գյուղատեղին, մի ընդարձակ հրվանդան է, շուրջ 30 հեկտար տարածությամբ, փոքր անհարթություններով, 3 կողմից շրջապատված Սեւանի ջրերով:**

Այս միջնադարյան գյուղի ավերակների տակ թաքնված են ավելի վաղ շրջանի՝ կիկլոպյան ամրոցի հետքեր: Կիկլոպյան պարիսպների հետքեր երեւում են ամրոց-շենի հյուսիսարեւմտյան կողմից, այնուհետ դրանք ձգվում են դեպի արեւմուտք ու ապա հարավ, մոտ 900 մետր ընդհանուր երկարությամբ: Ամրոց-շենի մնացած մասերը պարսպապատված չեն, քանի որ այդ մասերը խիստ քարքարոտ ու զառիթափ են: Այդ տարածությունում եղած երեք փոքր ձորակներն էլ, որ կարող էին դեպի ամրոց հեշտ ներխուժման մատույցներ ծառայել, ափից ափ փակված են եռաշարք պարիսպներով:

Պարիսպների արտաքին կողմից նկատելի են յոթ տարբեր ձեւի ու մեծության աշտարակների մնացորդներ: Նրանցից չորսը կիսաշրջանի ձեւ ունեն, հավանաբար ուշ շրջանում վերակառուցված, իսկ երեքը քառակուսի են՝ նման մյուս կիկլոպյան ամրոցների աշտարակներին: Ճանապարհը, որը մտնում է ամրոց-շենը, արեւմուտքից է եւ երկու կողմից պարսպապատված մոտենում է միջնաբերդին, որը, համեմատած մյուս միջնաբերդերի հետ, շատ փոքր է՝ ավելի նման բարձրադիր կետում զետեղված մի առանձին տան կամ շինության, քան թե միջնաբերդի: Ամրոց-շենի հյուսիսարեւմտյան մասում պահպանվել են կիկլոպյան տիպի կացարանների պատեր: Այստեղ հետախուզական մի խրամատով պեղումներ կատարեցինք, որոնք առանձին արդյունքների չհանգեցրին, բացի խեցեղենի մանր բեկորներ ու ընտանի թռչունների ոսկորներ գտնելուց:

Ամրոց-շենի պահակետը գտնվում է երկու կիլոմետր դեպի հարավ, մի ժայռաբլուրի վրա եւ իրենից ներկայացնում է մի փոքր ամրոց: Իր մեծությամբ ու տեղադրմամբ սա ոչ այլ ինչ է, քան վերը նկարագրված ամրոց -շենից դուրս բերված մի պահակետ:

Ամրոցի ներսում չի նկատվում որեւէ կացարանի հետք: Հավանորեն, այս պահակետում բնակչություն կամ զորախումբ չի եղել: Բնակարանների հետքեր երեւում են ամրոցի շուրջը»,- գրում է Գեդեոն Միքայելյանը:

Ամրոցի հյուսիսային ու հյուսիսարեւելյան կողմերում, բնական ժայռերի խոռոչներում կա երկու քարանձավ, որոնք, հավանաբար, քարայր-կացարաններ են ծառայել: Չի բացառվում նաեւ, որ դրանք ժամանակին օգտագործված լինեն նաեւ որպես գաղտնուղիներ: Երեք քարայր-կացարաններ էլ, շատ ավելի մեծ չափերի ու մուտքերում քարերի շարվածքներով, գտնվում են Քանագեղ հնավայրից մոտ կես կիլոմետր հեռավորությամբ, հյուսիսարեւմտյան թեւում, հանդիպակաց լեռնալանջի ստորոտին: Իսկ այդ քարայրների բարձունքի սարահարթի վրա նկատվում են պարիսպների հետքեր:

Ավելորդ չէ նկատել ու նշել, որ Քանագեղից մոտ 1-1,5 կիլոմետր դեպի հյուսիս, Մարտունի-Գավառ-Սեւան ավտոմայրուղու արեւմտյան կողմում, բարձրաբերձ ժայռերի գետնամերձ խոռոչներում ժամանակին եղել են շատ ավելի մեծ քարայր-կացարաններ, որոնք մինչեւ նախորդ դարի կեսերը Կարմիրգյուղի անասնապահական տնտեսությունների կողմից օգտագործվել են որպես անասունների ամառային պատսպարման վայրեր: Պարզ է, որ այդ քարայր-կացարանները այստեղ բնակվող մարդկանց կողմից օգտագործվել են դեռեւս անհիշելի ժամանակներից: Քանագեղ ամրոցի ու նրա վրա տարածվող միջնադարյան գյուղատեղիի ավերակների հարեւանությամբ, դեպի հարավ-արեւմուտք, տարածվում են խոշոր չափերի, շրջանաձեւ շարված ու մեծ սալաքարերով ծածկված հնագույն դամբարանները, որոնց թիվը գերազանցում է երեք տասնյակը: Այստեղ հնագիտական պեղումներ են իրականացվել անվանի հնագետ, պատմական գիտությունների դոկտոր Աշոտ Փիլիպոսյանի գլխավորած արշավախմբերի կողմից, որոնց արդյունքում հսկայական ու հավաստի տեղեկություններ են ստացվել այս հնավայրի պատմության ու բնակիչների կենսագործունեության մասին:

Աշոտ Փիլիպոսյանի իսկ վկայությամբ՝ մինչ այժմ իր ղեկավարած հնագիտական արշավախմբերի կողմից պեղվել է 11 դամբարան, իսկ ահա պեղումների ծրագրում դեռեւս մնում են շուրջ 20 դամբարաններ, որոնց բացմամբ կբացահայտվեն շատ ավելի հարուստ ու արժեքավոր հնագիտական գաղտնիքներ:

-Քանագեղի դամբարանադաշտում պեղումները սկսվել են անցած դարի 80-ական թվականներին, երբ Վարդենիս-Մարտունի-Երեւան ավտոճանապարհի կառուցման պատճառով այստեղ վնասվել էին մի շարք հնագույն դամբարաններ: Առհասարակ, դրանց քանակը հասնում է 31-ի, որոնցից առ այսօր պեղվել են 11-ը: Պեղումներն ի հայտ են բերել հետաքրքիր ու պատմահնագիտական առումով բացառիկ արժեք ներկայացնող նյութեր, որոնք գաղափար են տալիս Սեւանի ավազանում Քրիստոսից առաջ 16-7-րդ դարերում բնակված մարդկանց կենցաղի, հավատալիքների, զբաղմունքի, թողած մշակութային արժեքների, սովորույթների, մարդաբանական տիպի, այլ իրողությունների մասին: Հայտնաբերվել են մարդկային տասնյակ կմախքներ, որոնց հիմնական մասը պահպանվել են լավ վիճակում: Պեղվել են պերճանքի առարկաներ, ընտանի կենդանիների ոսկորներ, խեցեգործական իրեր, ուլունքներ, բրոնզե ապարանջաններ, մատանիներ, գլանաձեւ իշխանական կնիք, թռչունների բրոնզե սնամեջ արձանիկներ, ճակատակալներ եւ այլ իրեր:

Վերջին երեք տարիների ընթացքում մենք պեղել ու ուսումնասիրել ենք երկու դամբարան, որտեղ հայտնաբերել ենք պարսիցծոցյան ծովախեցիներից պատրաստված պերճանքի առարկաներ: Սա նշանակում է, որ մեր հեռավոր նախնիները դեռեւս մեզանից ավելի քան 3500 տարի առաջ առեւտրատնտեսական ու մշակութային կապեր են ունեցել Պարսից ծոցի երկրների հետ: Գտել ենք նաեւ բրոնզե զարդեր պատրաստող կաղապար, որով հնարավոր է կանացի 7 տեսակ զարդեր պատրաստել: Սա էլ իր հերթին ապացուցում է, որ բացի անասնապահությունից եւ երկրագործությունից, տեղի բնակչությունը տիրապետել է արհեստներին, ինչպես նաեւ՝ կիրառական արվեստի ճյուղերին: 2023 թվականի ամռանը բացված 10-րդ դամբարանի երկու խցերում, միասին վերցրած, հաշվել ենք 33 մարդկային կմախք՝ հիմնականում բոլորն էլ լավ պահպանված: Թիվ 11 դամբարանից, որը բացվել է անցած տարում, հայտնաբերել ենք մարդկային ոսկորներ, կաշվե եւ բրոնզե իրերի մնացորդներ: Թեեւ դամբարանի նյութն աղքատիկ է, սակայն այն ունի ամուր ու հրաշալի պահպանված շրջանաձեւ շարվածք, երեք մեծ սալերով ծածկված դամբանախուց: Դամբարանը գտնվում է դամբարանադաշտի ամենաբարձր դիրքում, արեւմտյան կողմի ժայռամերձ հատվածում: Կարեւորն այն է, որ այս դմբարանն ամենահինն է եւ վերաբերում է Ք.Ա. 16-15-րդ դարերին: Հույս ունենք, որ մոտակա տարիներին եւս այս հնավայրում պեղումները կշարունակվեն,- ներկայացրեց Աշոտ Փիլիպոսյանը:

Տողերիս հեղինակին բախտ է վիճակվել՝ 2001 թվականին անձամբ ներկա գտնվելու դամբարաններից մեկի բացման աշխատանքներին: Եվ այն, ինչ դուրս բերվեց Ք.Ա. 17-րդ դարում կառուցված դամբարանից, պարզապես աներեւակայելի էր ու տպավորիչ: Դամբարանի մի խցից դուրս բերվեց մեծատոհմիկ մի կնոջ կմախք, որը, բառիս բուն իմաստով, թաղված էր անհամար զարդերի մեջ. նրա պարանոցն ու դաստակները զարդարում էին բրոնզե ապարանջաններ, բոլոր տաս մատները՝ բրոնզե մատանիներ: Այդ զարդերը պատրաստված էին մեծ վարպետությամբ, ինչը պարզորոշ փաստում է, որ Վանի թագավորության (Ուրարտու)՝ Սեւանա լճի ավազան մուտք գործելուց շուրջ 700 տարի առաջ մեր հեռավոր նախնիները տիրապետել են թե՛ կիրառական արվեստին, թե՛ մետաղագործությանն ու այլ արհեստների: Նույն դամբարանում էլ հայտնաբերվեց նաեւ Միտտանիի թագավորության իշխանական կնիքը, ինչն իր հերթին փաստում է այստեղ գոյություն ունեցած վաղպետական կազմավորման, քաղաքական ու առեւտրական հարաբերությունների մասին: Նույն դամբարանի մեկ այլ խցից էլ դուրս բերվեցին կնոջ ու մանկահասակ երեխայի մասունքներ: Երեխան մոր գրկում դրվել էր ճիշտ այն դիրքում, ինչ դիրքում որ մինչ լույս աշխարհ գալը մարդ արարածը գտնվում է արգանդում: Դամբարանից դուրս բերված մարդկային ոսկորների չափից էլ կարելի էր դատել, որ այստեղ բնակվող բրոնզեդարյան մարդիկ ունեցել են բարձր հասակ:

Հայտնի ազգագեւագետ ու հնագետ Երվանդ Լալայանը Քանագեղ հնավայրի միջնադարյան գյուղատեղին կոչել է Սուրբ Գեւորգ՝ ի նկատի ունենալով այնտեղ կիսավեր վիճակում պահպանված եկեղեցին: «Երրորդ գյուղատեղին կոչվում է Սուրբ Գեւորգ, որովհետեւ այս անվամբ մի ավերակ եկեղեցի կա այստեղ: Կան տնատեղեր եւ խաչարձաններ, առանց տապանագրերի»,-գրում է Լալայանը՝ սակայն սխալվելով, քանի որ մեկ այլ ականավոր հնագետ՝ Սեդրակ Բարխուդարյանը, իր ժամանակին գտել ու ուսումնասիրել է այդ տապանագրերի վրա պահպանված տեքստերը:

Ահա «Կարմիրգյուղի դոլակներ» կոչված վայրի գերեզմանոցում գտնվող տապանագրերի վերծանված տեքստերը. «**Խաչքար, մեծ ժայռաբեկորից, ընկած է գյուղատեղիի գերեզմանատան մեջ, ստորին մասում՝ 4 տող: ՅԻՇԱՔ ՔՐԻՍՏՈՍ ԱՍՏՎԱԾ ՁՎԱՍԼԻՆ ՀՈԳԻՆ ՁԳԵՐԳԱ: Համարվում է 13-րդ դարի խաչքար»:**

«Խաչքար, մեծ եւ գեղաքանդակ, կանգնած է երեք շարքից կազմված անմշակ քարերի պատվանդանի վրա՝ ավերակ մատուռի մոտ. միայն ստորին մասում անարվեստ, գուցե հետագայում գրված 2 տող. ԽԱՂԱԹԻՇՆ: Համարում ենք 13-րդ դարի»:

«Խաչքար, ընկած նախորդի մոտ, ստորին մասում 2 տող. ԿԱՆԿՆԵՑԱՎ ԽԱՉՍ ԳՈՒՆԴՆ ՀՈԳՈՅ ՈՒ ՓՐԿՈՒԹԵ հավանաբար 15-րդ դարի»:

«Խաչքար, նախորդի մոտ, պատվանդանի վրա, ստորին մասում 3 տող. ԿԱՆԿՆԵՑԱՎ ՅԱՆՈՒՆ ԱՅԼԱՀԴԱՂԱ ՀՈԳՈՅ ՓՐԿՈՒԹԻՆ.հավանաբար 15-րդ դար»:

«Խաչքար, մեծ ժայռաբեկորից, կանգնած է սուրբ Խաչ ավերակ մատուռի գավթի պատի տակ, ստորին մասում 6 տող. ԵՍ ՊԱՂԱՆՈՍ ԷՐԵՑՍ ԿԱՆԿՆԵՑԻ ՁԽԱՉՍ ՀԱՒՐ ԻՄՈՅ ԳՈՐԳ ԻՐԻՑՈՒ. ՅԻՇԵՑԵՔ ՔՐԻՍՏՈՍ Հավանաբար՝ 15-րդ դար»:

«Տապանաքար, գտնվում է Ս. Խաչ մատուռի հետեւը, նոր գերեզմանատան մեջ, երեսին 2 տող. ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՀՌՈՄԻՆ. ԹՎ. ՌՃԼԷ/1688/»:

/շարունակությունը՝ էջ 5-ում/



15.qxd 25/07/2025 15:52 Page 5

ՔԱՆԱԳԵՂ ՀՆԱՎԱՅՐԻ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ

/սկիզբը՝ էջ 4-ում/

Սուրբ Գեւորգ բազիկիկ եկեղեցին համարվում է 13-14-րդ դարերի կառույց, սակայն կա կարծիք, որ այն ավելի հին կառույցի մասեր ունի եւ վերականգնվել կամ վերակառուցվել է 10-17-րդ դարերում: Մուտքը հարավային կողմից է, ծածկը եւ սյուները փայտից են, սակայն մի սյան տակ տեղադրված քարե սյան խարիսխը պարզորոշ հուշում է, որ ժամանակին այս կառույցը կամ նրան մոտիկ գտնվող կառույցներն ունեցել են քարե սյուներ ու այլ ոճի ճարտարապետություն:

Եկեղեցին ծածկված է ժամանակակից ազբեստյա շիֆերով, իր խարխուլ, անշուք պատերով գրեթե զուրկ է ճարտարապետությունից, սակայն աչքի է ընկնում պատերի կամ խորանի մեջ ագուցված գեղաքանդակ խաչքարերով, որոնք առանձնակի շուք են տալիս հուշարձանին, մանավանդ՝ եկեղեցու մուտքի խաչքարը՝ խաղողի վազերի ու հավերժության նշանի կերտվածքով: Սուրբ Գեւորգ եկեղեցին ունի նաեւ գավիթ ու կից մատուռ՝ գեղաքանդակ խաչքարերով ու տապանաքարերով:

Հարյուրին մոտ տապանաքարեր ու խաչքարեր կան նաեւ Սուրբ Խաչ մատուռի շրջակայքում: Դրանք ապշեցնում են իրենց կերտվածքի վարպետությամբ, քանդակների շքեղությամբ, չափերի մեծությամբ եւ նախշագոտիների բազմազանությամբ: Տապանաքարերի վրա պատկերված կենցաղային տեսարանները եւս պատկերավոր են ու խորհրդավոր՝ լեցուն ավյունով լի կյանքով ու աստվածավախությամբ՝ աշխարհիկի ու հոգեւորի կենսափիլիսոփայության մեկտեղմամբ:



Հենց Սուրբ Խաչ մատուռի շրջակայքն է այժմյան Քանագեղի ամենաերեւելի, ամենագրավիչ տարածքը, ուր առավել ցայտուն է ընդգծված հայ քարագործ-քանդակագործ վարպետների մտքի խորաթափանցությունը, անմրցելի, անկրկնելի արվեստի հարատեւությունը:

Զարմացնողն այն է, որ այստեղ տեղադրված բազմաթիվ տձեւ քարերին անգամ քարագործ վարպետները տվել են չափազանց շռայլ գեղեցկություն ու երեւելի տեսք՝ պատված հոյակերտ նախշերով ու քանդակներով:

Մի տեսակ դժվար է պատկերացնել, որ վաղուց արդեն համաշխարհային հռչակ ձեռք բերած Նորատուսի բազմատեսակ, բարձրարվեստ խաչքարերը դիտելուց հետո մարդկային աչքը զմայլվի այլ խաչքարերի քանդակներով, սակայն Քանագեղի Սուրբ Խաչ մատուռի շրջակայքի խաչքար-տապանաքարերը, որոնք Նորատուսից գտնվում են մի քանի կիլոմետր հեռավորությամբ, կրկին բաց երկնքի տակ գտնվող թանգարանի հռչակ ձեռք բերելու հավակնություն ունեն:

Այստեղ կերտված խաչքար-տապանաքարերը մի քանի դարի պատմություն ունեն՝ սկսվելով 9-րդ դարից ու ավարտվելով 18-րդ դարում: Բնական է, որ քարագործ վարպետները Նորատուսում, Քանագեղում, նաեւ Գեղամա աշխարհի բոլոր անկյուններում սերնդեսերունդ իրար են փոխանցել ու հարստացրել խաչքարագործության արվեստը՝ քարերի վրա թողնելով հայկականության հավերժական կնիքը:

Սուրբ Խաչ կիսավեր մատուռը վերանորոգվել է 2000 թվականին, Գեղարքունիքի մարզի Կարմիրգյուղի բնակիչ Պարգեւ Զրաղացպանյանի միջոցներով: Այստեղ հաճախակի են այցելում ուխտավորներ Գեղարքունիքի մարզի ամենատարբեր բնակավայրերից:

Գավառ-Մարտունի մայրուղու վրա անասնահոտերի անցման նպատակով կառուցված կամրջի հյուսիսային կողմում, ուղիղ բարձունքի ծայրին նկատելի են մի քանի տապանաքարեր, որոնցից մեկը պատկերազարդ է՝ հավերժության նշանով: Սրանից արդեն կարելի է եզրակացնել, որ ճանապարհի շինարարության ժամանակ տակնուվրա է արվել նաեւ այստեղ գտնվող պատմական գերեզմանոցը, որի արեւմտյան հատվածն արդեն կտրվել է արեւելյան կողմից: Հենց կամրջի դիմաց, դեպի արեւմուտք, նկատվում է լայն պարիսպը, որը ձգվում է մի քանի հարյուր մետր:

Քանագեղն, այո, նաեւ անգնահատելի սրբավայր է,քանի որ այն իր վրա կրում է մեր ժողովրդի հազարամյակների երթի ու պատմության անջնջելի կնիքը:

Խոսրով Խլղաթյան

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՐԴԵՆ ԿՈՒՏԱԿՎԵԼ Է 20 ՀԱԶԱՐ 100 ՏՈՆՆԱ ԱՆԱՍՆԱԿԵՐ

Գեղարքունիքի մարզի տնտեսություններում 2025 թվականի հունիսի վերջին օրերից սկսվել եւ ընթանում է խոտի բերքահավաքը:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պահպանության վարչությունից, 2025 թվականի հուլիսի 15-ի դրությամբ արդեն մարզի տնտեսություններում կուտակվել է շուրջ 20 հազար 100 տոննա անասնակեր: Հիմնականում հնձվել են կերային մշակաբույսերի՝ կորնգանի եւ առվույտի ցանքատարածությունները, որոնք կազմել են 5892 հեկտար: Հեկտարի միջին բերքատվությունը կազմել է շուրջ 3, 4 տոննա:

18 հազար տոննա անասնակեր կուտակվել է Վարդենիս համայնքում, 965 տոննա՝ Մարտունի, 500 տոննա՝ Գավառ, 455 տոննա՝ Ճամբարակ եւ 180 տոննա՝ Սեւան համայնքների տնտեսություններում:

Խոտհունձն արդեն սկսվել է նաեւ բնական խոտհարքերում, որտեղ հեկտարի միջին բերքատվությունը կազմում է 1,5-2 տոննա: Եղած տեխնիկական միջոցները բավարար են՝ խոտի բերքահավաքը ժամանակին կատարելու համար:

Անասնակերի բերքահավաքը Գեղարքունիքում կշարունակվի մինչեւ սեպտեմբեր ամսի կեսերը:

ՍԱՐՈՒԽԱՆԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑՈՒՄ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ԳՈՐԳԻ ԿՏՐՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Սարուխան գյուղի արվեստի դպրոցում տեղի է ունեցել կերպարվեստի բաժնի գորգագործ սաների գորգերի կտրման հանդիսավոր արարողությունը:

Արարողությունն ուղեկցվել է հայկական գորգի եւ գորգագործության մասին տեղեկությունների ներկայացմամբ, շնորհակալագրերի հանձնմամբ եւ պարարվեստի բաժնի սաների գեղարվեստական կատարումներով:

Գորգի կտրման արարողությանը դպրոցի տնօրինության, ուսուցիչների եւ ծնողների հետ մասնակցել են նաեւ «Ժողովրդական արվեստների հանգույց» հիմնադրամի «Տորքի որդեգրում» ծրագրի դասընթացավարներ Լիլիթ Պերոկլյանը եւ Դիանա Հովհաննիսյանը:

Դպրոցի կերպարվեստի բաժնում գորգագործություն ուսուցանվում է վերջին վեց ամիսների ընթացքում, դասավանդում է Նազիկ Կարապետյանը: Անցած տարի նա մասնակցել է «Ժողովրդական արվեստների հանգույց» հիմնադրամի կողմից կազմակերպված «Տորքի որդեգրում» ծրագրին եւ գորգագործության հմտությունները այժմ փոխանցում է իր սաներին: Ծրագիրն իրականացվել է չորսամսյա անվճար դասընթացների շրջանակում, Գավառի գեղարվեստի դպրոցի տնօրինության նախաձեռնությամբ եւ Գավառի համայնքապետարանի աջակցությամբ: Դասընթացներին մասնակցել են Գավառ համայնքի արվեստների դպրոցների ուսուցիչներ եւ գորգագործությամբ հետաքրքրվածներ:

Ալվարդ Մանուկյան

ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎԵԼ Է ԲԵՐԴԿՈՒՆՔԻ ՄԱՅՐՈՒՂՈՒ ՓՈՂՈՑԻ 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔԸ

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Բերդկունք գյուղում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում հիմնանորոգվել է Մայրուղու փողոցի 2-րդ նրբանցքը:

Բերդկունքի Մայրուղու փողոցի 2-րդ նրբանցքի հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 31 միլիոն 800 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Գավառի համայնքապետարանը: Ծրագրով նախատեսված է Բերդկունքի Մայրուղու փողոցի 2-րդ նրբանցքի ասֆալտապատում՝ 500 մետր երկարությամբ եւ 2000 քառակուսի մետր մակերեսով:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի հունիսից եւ հուլիսի 14-ի դրությամբ արդեն գտնվում են ավարտական փուլում:

Շինարարական աշխատանքներն իրականացրել է «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ն:

Մայրուղու փողոցի 2-րդ նրբանցքի հիմնանորոգված ճանապարհը տանում է դեպի Բերդկունքի նորակառույց մանկապարտեզի շենք, որի շահագործումը նածատեսված է 2025 թվականին:

Ալվարդ Մանուկյան

ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆՈՒՄ ՈՌՈԳՄԱՆ ՋՐԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԽՈՇՈՐ ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն գյուղում ՀՀ կառավարության կողմից 2024 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում արդեն ավարտական փուլում են գտնվում ոռոգման ջրատարի ներքին ցանցի կառուցման աշխատանքները:

Ներքին Գետաշենի ոռոգման ջրատարի ներքին ցանցի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 290 միլիոն 450 հազար դրամ, որի 75 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 25 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է ոռոգման ջրատարի ներքին ցանցի կառուցում Ներքին Գետաշենի Դարեր, Ներքին Դեմեր, Սուրբ Խաչ, Վերին Դեմեր, Վերին Դուրան, Ներքին Դուրան, Գետափնյա թաղամասերի 12 փողոցներում, 5500 մետր ընդհանուր երկարությամբ, երկաթյա կամ երկաթբետոնյա կիսախողովակներով:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2024 թվականի օգոստոսի կեսերից եւ 2025 թվականի հուլիսի 10- դրությամբ արդեն գտնվում են ավարտական փուլում:

Շինարարական աշխատանքներն իրականացրել է «Բիդեք» ընկերությունը:

Ոռոգման ներքին ցանցը միաժամանակ Ներքին Գետաշենում հիմնանորոգվող որոշ ճանապարհների համար ծառայելու է որպես ջրահեռացման համակարգ:

Ծրագրի իրականացման շնորհիվ այս տարվանից շուրջ 400 տնտեսությունների ոռոգման ջուրն արդեն մատակարարվում է ժամանակին եւ անկորուստ:

15.qxd 25/07/2025 15:52 Page 6

ԴԴՄԱՇԵՆԻ ՄՍՈՒՐՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԸ ՀԱՄԱԼՐՎԵԼ Է ՆՈՐ ԳՈՒՅԳՈՎ

Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի Դդմաշեն գյուղի մանկապարտեզի նորաբաց խումբը բարեգործական ծրագրի շրջանակներում ստացել է նոր գույք:

Դեռեւս 2024 թվականի տարեվերջյանին Սեւան համայնքի ավագանու հերթական որոշմամբ Դդմաշենի մանկապարտեզի գործունեությունը կազմակերպելու համար ավելացվել է մեկ խումբ, որի լիարժեք գործունեության համար չի ուշացել նաեւ անհրաժեշտ աջակցությունը:

«Ֆոքքս օն չիլդրեն նաու, ինկ» Հայաստանյան մասնաճյուղի աջակցությամբ եւ բարեգործական ծրագրերի շրջանակներում, Սեւանի համայնքապետարանի հետ արդյունավետ համագործակցության արդյունքում,Դդմաշեն գյուղի մանկապարտեզի նոր խումբը համալրվել է անհրաժեշտ գույքով՝ երկհարկանի մահճակալներով, ներքնակներով, մանկական աթոռակներով եւ ճաշասեղաններով, հագուստի պահարաններով, խաղային կենտրոններով, հանդերձարանի նստարաններով, դաստիարակի աշխատասեղանով եւ աթոռներով, գրատախտակով, ինչպես նաեւ՝ դիդակտիկ նյութերով:

Մանկապարտեզն օգտագործում է տրամադրված գույքը, որը հարմարանում է, անվտանգ եւ համապատասխանում է առկա չափորոշիչներին:

Հուլիսի 17-ին Սեւան համայնքի Դդմաշեն բնակավայրի մսուր-մանկապարտեզի անձնակազմը եւ սաները հյուրընկալել են «Ֆոքքս օն չիլդրեն նաու, ինկ» բարեգործական կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղի ներկայացուցիչ Անահիտ Քալանթարյանին եւ բարերար, երջանկահիշատակ Վարազ Կարապետյանի դստերը՝ Անի Կարապետյանին՝ ամուսնու հետ:

Հյուրընկալությունն էլ մանկապարտեզում սպասված էր. փոքրիկները աղու հացով, երգուպարով դիմավորեցին հյուրերին, որոնք արդեն դարձել են մանկական օջախի բարեկամները: Մանկապարտեզում անցկացրած ժամերի ընթացքում հյուրերը ոչ միայն վայելեցին փոքրիկների ներկայությունը, այլ նաեւ հասցրին զբաղվել նրանց հետո, կազմակերպել խաղեր, անցկացնել հաճելի ժամանակ: Հ

յուրերը չէին եկել դատարկաձեռն. փոքրիկներն ստացան նվերներ, ու հերթական օրն էլ դարձավ իսկական տոն:

Սեւան համայնքը երախտապարտ է իր բարեկամներին, որոնց բարեսիրական ծրագրերի շնորհիվ հնարավոր է դառնում իրականացնել համայնքապահպան ծրագրեր:

Որպես դրա վկայություն՝ «Ֆոքքս Օն Չիլդրեն Նաու, ինկ» ԲԿ հայաստանյան մասնաճյուղը եւ երջանկահիշատակ Վարազ Կարապետիանի ընտանիքը Սեւան համայնքի ղեկավար Սարգիս Մուրադյանի կողմից արժանացան շնորհակալագրերի՝ արդյունավետ համագործակցային աշխատանքի, բարեսիրական ծրագրերի իրականացման համար:

Արմինե Ղուկասյան

ԿԱՐԵՆ ԶԱԽԱՐՅԱՆՆ ԱՐԾԱԹԵ ՄԵԴԱԼ Է ՆՎԱՃԵԼ ԲՌՆՑՔԱՄԱՐՏԻ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ



Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի մարզադպրոցի սան, բռնցքամարտիկ Կարեն Զախարյանը Սերբիայում կայացած բռնցքամարտի Եվրոպայի ավագ տարիքի պատանիների առաջնությունում զբաղեցրել է երկրորդ տեղը եւ տուն վերադարձել արծաթե մեդալով:

Ինչպես տեղեկացրեց ՀՀ Գեղարքունիքի մարզի բռնցքամարտի ֆեդերացիայի նախագահ Գևորգ Սարգսյանը, Կարեն Զախարյանը գերազանց է հանդես եկել մրցաշարում՝ մինչ եզրափակիչ հասնելը հաղթելով Մակեդոնիան, Ադրբեջանը եւ Ռուսաստանը ներկայացնող մարզիկներին: Սակայն հայ մարզիկը եզրափակիչ մենամարտին չի կարողացել մասնակցել, քանի որ կիսաեզրափակիչ մենամարտում ստացել է ոտքի վնասվածք եւ ի վիճակի չի եղել՝ ռինգ դուրս գալու:

-Իհարկե, ափսոս էր, որ Կարենը չկարողացավ եզրափակիչ մենամարտին մասնակցել: Մենք հավատում ենք նրա կարողություններին ու հավատացած էինք, որ նա կնվաճի չեմպիոնի կոչումը, սակայն դրան խանգարեց լուրջ վնասվածքը: Ամեն դեպքում, արծաթե մեդալն էլ շատ լուրջ նվաճում է մեզ համար, ու հավատացած ենք, որ Կարենը դեռ շատ մեդալներ է նվաճելու միջազգային մրցաշարերում,- նշեց Գևորգ Սարգսյանը:

Խոսրով Խլղաթյան

ՍԵՎԱՆԻ ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ «ԱՐՎԵՍՏԻ ԿԵՐԱՄԻԿԱ» ԽՄԲԱԿԻ ԲԱՑՈՒՄԸ

Սեւան համայնքում տեղի ունեցել Ուկրաինական մշակութային կենտրոնի «Արվեստի կերամիկա» խմբակի բացումը:

Հայկական Կարմիր Խաչի եւ Միջազգային Ֆեդերացիայի կողմից՝ Ուկրաինայի դեսպանատան նախաձեռնությամբ, Սեւանի Տարաս Շեւչենկոյի անվան ուկրաինական մշակույթի կենտրոնի երեխաների վարպետության դասերի համար ձեռք են բերվել կավագործական սարքավորումներ եւ նյութեր:

Սեւանի ուկրաինական մշակութային կենտրոնի «Արվեստի կերամիկա» խմբակի բացման առիթով Սեւանի Տարաս Շեւչենկոյի անվան ուկրաինական մշակույթի կենտրոն են այցելել Հայաստանի Հանրապետությունում Ուկրաինայի գործերի ժամանակավոր հավատարմատար Վալերի Լոբաչը, դեսպանատան աշխատակիցներ, «Ուկրաինա- Հայաստանի ուկրաինացիների ֆեդերացիա» ՀԿ ներկայացուցիչներ, Հայկական Կարմիր Խաչի կամավորական եւ երիտասարդական բաժնի ղեկավար Ռոզա Ստեփանյանը, Հայաստանում Կարմիր խաչի եւ Կարմիր Մահիկի Միջազգային Ֆեդերացիայի պատվիրակության ղեկավար Ազամատ Բայալինոան: Պատվիրակության կազմում են եղել նաեւ հայտնի ուկրաինացի երաժշտագետ, դաշնակահար եւ ուկրաինական երաժշտական մշակույթի դեսպան, դոկտոր Տարաս Ֆիլենկոն եւ Հայաստանում ուկրաինական համայնքի ներկայացուցիչներ:

Ուկրաինայի դեսպանատան նախաձեռնությամբ ձեռք բերված կավագործական սարքավորումներով եւ նյութերով կզբաղվեն Սեւանում բնակվող ԼՂ–ից բռնի տեղահանված ընտանիքների, ինչպես նաեւ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաները, ինչու չէ, նաեւ նրանց ծնողները՝ այցելելով Սեւանի Տարաս Շեւչենկոյի անվան ուկրաինական մշակույթի կենտրոն, որը տեղակայված է Սեւանի երաժշտական դպրոցի շենքում:

Ներկաները, ինչպես նաեւ Սեւանի երաժշտական դպրոցի աշակերտները «Արվեստի կերամիկա» խմբակի բացման շրջանակներում ունկնդրել են նաեւ դաշնամուրի վարպետության դաս եւ դաշնամուրային կատարումներ հայտնի ուկրաինացի երաժշտագետ, դաշնակահար եւ ուկրաինական երաժշտական մշակույթի դեսպան, դոկտոր Տարաս Ֆիլենկոի կողմից:

Արմինե Ղուկասյան

ԾՈՎԱՄԱՐՈՒՄ ՈՌՈԳՄԱՆ ՋՐԱՏԱՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՈՒ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑ Է ԿԱՌՈՒՑՎԵԼ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծովասար գյուղում ՀՀ կառավարության կողմից 2024 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում ավարտական փուլում են գտնվում ոռոգման ջրատարի ներքին ու արտաքին ցանցերի կառուցման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, Ծովասարի ոռոգման ջրատարի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 228 միլիոն 600 հազար դրամ, որի 75 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 25 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է Ծովասարում ոռոգման ջրատարի ներքին ու արտաքին ցանցերի կառուցում՝ 5,5 կմ ընդհանուր երկարությամբ, երկաթբետոնե կիսախողովակներով:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2024 թվականի սեպտեմբերից եւ 2025 թվականի հուլիսի 11-ի դրությամբ գտնվում են ավարտական փուլում: Շինարարական աշխատանքներն իրականացրել է «ՎՄՎ ՔԱՄՓԵԻ» ՍՊԸ-ն:

Ծրագրի իրականացման արդյունքում արդեն այս ոռոգման շրջանի մեկնարկից Ծովասարի բոլոր տնտեսությունները ոռոգման ջուրը ստանում են ժամանակին եւ անկորուստ:

ԾՈՎԻՆԱՐՈՒՄ ՈՌՈԳՄԱՆ ՋՐԱՏԱՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՈՒ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑ Է ԿԱՌՈՒՑՎԵԼ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծովինար գյուղում ՀՀ կառավարության կողմից 2024 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում ոռոգման ջրատարի արտաքին ու ներքին ցանց է կառուցվել:

Ծովինարի ոռոգման ջրատարի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 198 միլիոն 750 հազար դրամ, որի 75 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 25 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը: Ծրագրով նախատեսված է Ծովինարի ոռոգման ջրատարի արտաքին ու ներքին ցանցի կառուցում՝ 6010 մետր երկարությամբ, տարբեր տրամաչափերի երկաթբետոնե կիսախողովակներով: Ջրատարի արտաքին ցանցը կազմում է 1 կիլոմետր 300 մետր, ներքին ցանցը՝ 4 կիլոմետր 700 մետր, որը կառուցվել է բնակավայրի ներսում, տարբեր թաղամասերում: 2025 թվականի հուլիսի 17-ի դրությամբ շինարարական աշխատանքները գտնվում են ավարտական փուլում:

Ծրագրի իրականացման արդյունքում արդեն շուրջ 350 հեկտար տարածքում ոռոգման ջուրն անկորուստ ու ժամանակին մատակարարվում է Ծովինար գյուղի 250 տնտեսություններին:

ՎԱՐԴԱՁՈՐՈՒՄ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ՈՒ ՋՐԱՆՑՔ Է ԿԱՌՈՒՑՎԵԼ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վարդաձոր գյուղում ՀՀ կառավարության կողմից 2024 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում կառուցվել է ոռոգման համակարգ եւ Ջորագյուղ-Վարդաձոր ջրանցք:

Վարդաձորի ոռոգման համակարգի եւ Ջորագյուղ-Վարդաձոր ոռոգման ջրանցքի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 140 միլիոն 295 հազար 862 դրամ, որի 75 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 25 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է ոռոգման համակարգի կառուցում 10, 14, 16, 26, 27, 35, 41 –րդ եւ Ալաշկերտի փողոցներում ու մայր առվի վրա՝ 6010 մետր ընդհանուր երկարությամբ: 1700 մետր երկարությամբ էլ կառուցվել է Ջորագյուղ-Վարդաձոր ոռոգման ջրանցքը:

Ոռոգման համակարգի եւ ջրանցքի կառուցման շինարարական աշխատանքները մեկնարկել են 2024 թվականի սեպտեմբերից եւ 2025 թվականի հուլիսի 11-ի դրությամբ արդեն գտնվում են ավարտական փուլում:

Շինարարական աշխատանքներն իրականացրել է «Շին Կոմպլեքս» ՍՊԸ-ն:

Ծրագրի շահառու են հանդիսանում Վարդաձոր գյուղի բոլոր տնտեսությունները, որոնց այս տարվանից ոռոգման ջուրն արդեն մատակարարվում է ժամանակին եւ անկորուստ:

15.qxd 25/07/2025 15:52 Page 7

ԱՍՏՂԱԾՈՐՈՒՄ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՐԿՈՒ ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Աստղաձոր գյուղում ՀՀ կառավարության կողմից 2024 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրի շրջանակներում ընթանում են 2 խորքային հորի կառուցման աշխատանքներ՝ ոռոգման ու խմելու ջրի հետ կապված հիմնախնդիրները կարգավորելու նպատակով:

Աստղաձորի 2 խորքային հորի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 123 միլիոն 598 հազար դրամ, որի 75 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 25 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է Աստղաձորի արեւմտյան ու հարավային եզրերում խորքային հորերի կառուցում՝ 160 մետր խորությամբ, 155-393 միլիմետր տրամագծով: Կառուցվել է նաեւ 10 կիլովատտ հզորության էլեկտրագիծ:

Շինարարական աշխատանքները սկսվել են 2024 թվականի սեպտեմբերի սկզբից եւ 2025 թվականի հուլիսի 10-ի դրությամբ ավարտվել շուրջ 80 տոկոսով :

Ծրագրի իրականացման արդյունքում Աստղաձորի հարավային եզրին կառուցվող խորքային հորը ոռոգման ջրով կապահովի գյուղի գրեթե բոլոր տնտեսություններին, իսկ արեւմտյան թեւում կառուցվողը կբավարարի 70 տնտեսության խմելու, եւ ոռոգման ջրի կարիքները:

Շինարարական աշխատանքներն իրականացնում է «Բիդեք» ընկերությունը:

ՀՀ կառավարության կողմից 2024 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում ոռոգման համակարգի կառուցման աշխատանքներ են իրականացվել Արցախյան ազատամարտիկների փողոցում, «Չորի թաղի Վերին առվի» եւ «Ասֆալտի ներքեւի» տարածքներում:

Աստղաձորի ոռոգման համակարգի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմել է 64 միլիոն 64 հազար դրամ, որի 75 տոկոսը հատկացրել է ՀՀ կառավարությունը, 25 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսվել է ոռոգման համակարգերի կառուցում՝ 2081 մետր երկարությամբ: Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2024 թվականի սեպտեմբերից եւ 2025 թվականի հուլիսի 10-ի դրությամբ իրականացվել շուրջ 90 տոկոսով:

Շինարարական աշխատանքներն իրականացնում է «Շին Գրիգ» ընկերությունը:

Ծրագրի իրականացման արդյունքում Աստղաձորում ոռոգելի կդառնա շուրջ 80-100 հեկտար:

ԵԼԱԿԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵԿԱՄՏԱԲԵՐ ԱՐԴՅՈՒՆՔ Է ԱՊԱՀՈՎՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Հայրավանք գյուղի տնտեսություններից մեկում ելակի մշակությունը դառնում է եկամտաբեր զբաղմունք:

Հայրավանք բնակավայրում 2022 թվականին Բաղոյանների ընտանիքը 200 մետր քառակուսի հողատարածքում ելակի փորձնական մշակում է սկսել: Արարատյան դաշտից բերված սածիլները, ճիշտ է, դժվար են հարմարվել Հայրավանքի բնակլիմայական պայմաններին, բայց Բաղոյանների հոգատարության շնորհիվ մշակումը հաջողվել է, եւ այդ տարի նրանք ընդամենը 500 կիլոգրամ ելակի վաճառք են ունեցել: Իսկ ահա 2025 թվականին այս տնտեսությունն արդեն արտադրել ու իրացրել է 5 տոննա բերք: Տնտեսության ղեկավար Մելիք Բաղոյանն ընդալայնել է ելակի դաշտը, կատարելագործել մշակման եղանակը, ցանկանում է ընդլայնել սպառման շուկան:

Հայրավանքի ելակը ինքնատիպ համ ու բույր ունի: Մշակողները վստահեցնում են, որ ապահովում են արեւ ու մշակման տեխնոլոգիան: Պտուղն աճեցնում են դաշտային պայմաններում, ուր ոռոգումն իրականացնում են կաթիլային եղանակով: Ցանքատարածքությունն էլ կենդանիների ելումուտից պաշտպանում են «Խելացի հովիվ» տեխնոլոգիայով: Ելակի մշակման սեզոնին՝ շուրջ 3 ամիս, այս տնտեսությունում ստեղծվում է ժամանակավոր աշխատատեղերի հնարավորություն: Բաղոյանները նախատեսում են հետագայում ավելացնել ելակի մշակության ծավալները:

Ալվարդ Մանուկյան

ՍԱՐՈՒԽԱՆՈՒՄ ՓՈՂՈՑՆԵՐ ԵՆ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎՈՒՄ



Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Սարուխան գյուղում ՀՀ կատավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում մեկնարկել են Գոքոյան, Քիշոյան, Դեմիրճյան, Քուչակի առաջին եւ Քուչակի երկրորդ փողոցների հիմնանորոգման աշխատանքները:

Սարուխանի փողոցների հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 140 միլիոն 500 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Գավառի համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է Գոքոյան, Քիշոյան, Դեմիրճյան, Քուչակի առաջին եւ Քուչակի երկրորդ փողոցների ասֆալտապատում՝ 1657 մետր ընդհանուր երկարությամբ եւ 8285 քառակուսի մետր մակերեսով, ջրահեռացման համակարգի կառուցում:

Այս պահի դրությամբ աշխատանքները մեկնարկել են Գոքոյան փողոցում, որտեղ կատարվում է հին ծածկի քանդում: Փողոցն ասֆալտապատվելու է, ունենալու է ջրահեռացում, կառուցվելու են մայթեր:

Շինարարական աշխատանքներն իրականացնում է «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ն:

Ալվարդ Մանուկյան

ԿԱՐՄԻՐԳՅՈՒՂՈՒՄ ՈՌՈԳՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է ԿԱՌՈՒՑՎՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Կարմիրգյուղ բնակավայրում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում ընթանում են ոռոգման եւ ջրահեռացման համակարգի կառուցման աշխատանքներ:

Կարմիրգյուղի ոռոգման եւ ջրահեռացման համակարգի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 29 միլիոն դրամ, որի 75 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 25 տոկոսը՝ Գավառի համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է շուրջ 1 կիլոմետր երկարության ջրատարի կառուցում Կարմիրգյուղի Հովհաննես Շիրազ, Սասունցի Դավիթ եւ Ազատության փողոցներում, երկաթյա եւ երկաթբետոնյա կիսախողովակներով:

Որոշ հատվածներում արդեն կատարվել են հին խողովակների ապամոնտաժում, այժմ իրականացվում է երկաթբետոնյա վաքերի տեղադրում:

Աշխատանքները նախատեսվում է ավարտել մինչեւ հուլիսի վերջ:

Ալվարդ Մանուկյան

ԳԱՎԱՌԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՈԼԵՋԻ ՆՈՐ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ

Գեղարքունիքի մարզկենտրոն Գավառ քաղաքում 2023 թվականի վերջերից մեկնարկել և ընթանում են ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի նոր մասնաշենքի, այլ ենթակառուցվածքների կառուցման և մարզադահլիճի վերակառուցման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրեց շինարարական աշխատանքներն իրականացնող «Քյավառ Սերվիս» ՍՊԸ տնօրեն Արամ Սարգսյանը, Գավառի Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի նոր շենքի կառուցումն իրականացվում է պետբյուջեի միջոցներով: Ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 1 միլիարդ 307 միլիոն 531 հազար դրամ: Ծրագրով նախատեսվում է կառուցել 1132 քառակուսի մետր մակերես ունեցող ուսանողական 1 մասնաշենք, կաթսայատուն, անասնակերի և գյուղտեխնիկայի համար շվաքարաններ, «Խելացի» անասնագոմ, մարզական խաղահրապարակ, վերակառուցել առկա մարզադահլիճը և միջանցքը՝ 494 քառակուսի մետր մակերեսով:

2025 թվականի հուլիսի 21-ի դրությամբ շինարարությունն իրականացվել է շուրջ 27 տոկոսով՝ 354 միլիոն 789 հազար դրամի չափով: Մինչ այժմ իրականացված աշխատանքների արդյունքում կառուցվել է կաթսայատունը, անասնակերի համար նախատեսված շվաքարանը, վերակառուցվել մարզադահլիճը և միջանցքը, 74 տոկոսի չափով էլ իրականացվել են երկաթբետոնային աշխատանքները: Շինարարական աշխատանքները նախատեսված է ավարտել 2026 թվականի դեկտեմբերին:

ՄԵԿՆԱՐԿԵԼ ԵՆ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Արդեն մի քանի օր է, ինչ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում մեկնարկել եւ ընթանում են Երիտասարդության -11, 3 , 2, 6, 12 եւ Արզոյան -2 բազմաբնակարան շենքերի բակային տարածքների հիմնանորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմից, Վարդենիսի բազմաբնակարան շենքերի բակային տարածքների հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 85 միլիոն 764 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Վարդենիսի համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է Վարդենիս քաղաքի Երիտասարդության -11, 3 , 2, 6, 12 եւ Արզոյան -2 բազմաբնակարան շենքերի բակային տարածքների ասֆալտապատում՝ 8082 քառակուսի մետր մակերեսով: Շինարարությունը նախատեսվում է ավարտի հասցնել 2025 թվականի հոկտեմբերին:

Այս պահին ընթանում են հողային հարթեցման, ինչպես նաեւ՝ ապօրինի շինությունների ապամոնտաժման աշխատանքներ՝ բակային տարածքներն ասֆալտապատմանը նախապատրաստելու նպատակով:

Շինարարական աշխատանքներն իրականացնում են «Լեյվլ» եւ «Մոնտաժտրանսշին» ընկերությունները:

15.qxd 25/07/2025 15:52 Page 8

ԳԱՂԱՓԱՐԸ՝ ՓԱՍՏԻՑ ԲԱՐՁՐ



Այո, մենք ենք ու մենք պիտի ապրենք, ստեղծագործենք՝ անկախ ամեն ինչից ու անկախ խառնակ ժամանակից...

ՎՐԵԺ ԱԶԱՏԻ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

Մեր արմատները թաղված են պատմության խորքերում, մեր երազներն անկատար են, մեր իղձերը՝ կիսատ: Մենք այնքան հին ենք, որ մեր տեղանուններն անթարգմանելի են աշխարհի շատ լեզուներով: Մեր հոգին ձգտումների ճանապարհին է, մեր կարոտն անբուժելի: Խոսքերը մխիթարություն են, հայացքը մեր գամված հավատի աղերսանքին...

Իսկական գրողը լուսավորում է մարդու հոգին, ոգեշնչում ու հզորացնում նրան, պայծառացնում միտքն ու ներարկում լավագույն ձգտումներ:

Գրող, բանաստեղծ, հրապարակախոս Վրեժ Սարուխանյանի ստեղծագործությունները մտքի բացահայտ հաղթանակ են, որոնք ոչ միայն լուսավորում են մեր պատմության փակ էջերը, այլեւ մխիթարություն բերում տառապանքի սեւ հուշերն ու կարոտի մորմոքն արյան մեջ կրող հայության սիրտը: Մխիթարություն՝ շարունակվող մեր գոյությամբ, արմատական ավանդապաշտությամբ, կոդաբջիջը փրկելու ձգտումներով ու հավատի խորհրդով:

Արեւմտյան Հայաստան՝ բախտի մշուշներում կորած երազի հայրենիք...

«Էրգիրը աչքեր ունի՝ կապույտ են, բիբերը սեւ, կոպի տակ արցունք ունի, կաթիլը՝ անտես, անձեւ», «Էրգիրը սիրտ էլ ունի, ճաքել է, պայթել չկա, արյունը գնում անվերջ, սպառվել չկա, չկա»:

Գրողական հիշողության ու մտածողության ինչպիսի խորություն կարող է վերարտադրել նման տեսանելի պատկեր, ուր՝ «**Արնաքամ անգամ եղած, հոգի տալ չկա, ***»...արտահայտությունն ապրելու ու վերարտադրելու համար: Եվ հավիտենող հետեւության հիմքում խոսուն հաստատակամության հստակ բնորոշում է՝ **«Էրգիրը մե՞նք ենք, հոգի, Աստված է, Աստված վկա»:**

Նկարահանվել է «Էրգիր» ֆիլմը, որը ներկայացնում է Արեւմտյան Հայաստանի հետաքրքիր ու ուշագրավ դրվագներ:

«**Որ ֆիլմն էրգրի մասին է, հալբաթ կնայիմ», «Վախ քոռցա, իմ հորն էլ էսպես զարգին», «Իմ գլուխ հազար տարվա վերք է»**:

Այո, եւ այդ վերքը միայն Մարիամինը չէ: Այդ վերքը համայն հայության վերքն է՝ հիշողության պես հին, արյան նման կարմիր ու սեւ... «**Հայացքը հանգչող մայրամուտին էր», «Նանեն չմեռավ, Նանեն գնաց էրգիր»**....

Ցավի խորությունն անվերծանելի է, ցավի խորությունն՝ անընկալելի, այն արմատացած հիշողություն է՝ արյան հիշողություն...

Մենք մեր կյանքն ամփոփում ենք մեր սրտում եւ դիմանում ամեն ինչի.... Այսպիսին է Վրեժ Սարուխանյանի ստեղծագործական աշխարհի բուն վկայությունը՝ ուղեղում, սրտում եւ արյան կանչի մեջ...

Տարիներ առաջ ֆեյսբուքյան համացանցի պատին մի պատմություն էի նկատել, որ տպագրվել էր հիսուն տարի առաջ, Թալինի շրջանային թերթում: Տպավորիչ էր: Չեռագիրը նույնն էր՝ Երկիր, տեղահանություններ, քրդական ավերածություններ, հայակործան քաղաքականություն, ամենատարբեր քոչվորական խմբավորումների կողմից, եւ հերոսական բնավորություններ, ում շնորհիվ շարունակվում է հայի տեսակը:

«**Նորշեն գյուղը, գիշերվա խավարում մի ժամում ոտքի էր. ինչ ուներին՝ հապճեպ բարձում էին սայլերին, ձիերին, էշերին ու ջորիներին, նախիրն ու հոտերը դեմներն առած՝ քրդերը փախչում էին հարեւան գյուղերը: Նրանք էլ էին փախչում, ինչպես հայերը գրեթե բոլոր ժամանակներում: Պարեն մի հայ երիտասարդ էր, ում իր կնոջն ու որդուն վստահեց քուրդ Յուսուֆ աղան: Պարեն իր կյանքի դառը պատմությունն ուներ: Ծնողներին սպանել էին, իրեն պահել ստրուկի կարգավիճակով, որ հոտաղ դառնա, քուրդ աղային ծառայի: Տղան սայլով պիտի անվնաս տեղ հասցներ քրդի ընտանիքը, թե չէ կաշին կքերթեր, ինչպես աղան էր ասում: Արագընթաց եզները ձիերի արագություն էին ձեռք բերել ու վարգում էին մտրակների ու ճիպոտների հարվածների տակ:**

Պարեն մթի մեջ կոպերը սեղմեց: Հայրը քրդի գնդակից գալարվեց բակի մեծ քարին, քիչ այն կողմ մոր անարգված մարմինն էր: Պարեն ուզում էր լաց լինել, բայց արցունք չկար, չէր գալիս: Ծնողների թողած մրմուռը սրտում էր, աղայի ձայնն՝ ականջում.«Հայերենը պիտի մոռանաս: Իմ շան հետ էլ չպիտի հայերեն խոսես: Եթե խոսես, լեզուդ քոքից կպոկեմ ու հետո կսպանեմ: Դու հեր ու մեր չունես, քո տեր ես եմ, դու՝ իմ ծառան»: Պարեն որոշեց վրեժխնդիր լինել եւ առաջին անգամ հայհոյեց հայերեն: Եզների գլուխը դեպի անդունդն արեց, մտրակեց, սայլն անդունդը գլորվեց: Պարեն տղամարդ էր այլեւս, որ հիմա իր կյանքը պիտի փրկի, զարհուրելի աշխարհի բզկտող ճանկերից: Եվ փրկվեց ԿՅԱՆՔԸ՝ կյանքը հայության, հարատեւի մեջ վերարտադրվելու երկնային առաքինությամբ...»:

Վրեժ Սարուխանյանի բոլոր տողերում, տողատակերում տրոփում է հայության ցավը, որ համամարդկային է, գրողը բոլոր բջիջներով կապված է իր աշխարհի ներքին անհանգստությանն ու անվերջորեն խմորվող խնդիրներին, որոնք ժամանակի մեջ վերաճում են իսկական ողբերգության:

Ես ուշադրություն դարձրի գրքերի վերնագրերին՝ **«Էրգրականչ», «Տարոնականչ», «Իմ սիրտը հայ է»:** Կանչ, որ հազար ու մի զգացողություններ է բերում կորսված հայրենիքի, նրա անմահացած զավակների ու մեր տառապած ժողովրդի մասին, աշխարհի անտարբեր, երբեմն էլ՝ գրգռող ու բացասական միջամտությունների մասին:

Աշխարհ կոչվածը ծարավ է պատերազմների, կործանումների, բախտախնդրության: Արմատական, բանական հայը նրա սրտով չէ: Եվ հայի հանդեպ ատելությունը նոր չէ, ավելին, գնալով սաստկանում է, որովհետեւ հայի տեսակը բացառիկ է:

Վրեժ Սարուխանյանի ստեղծած գրականությունն էլ հենց այս բացառիկ, արարող ու ստեղծող, պայքարող տեսակի մասին է, եւ ի՛նքը, գրողը, որպես մարդ-անհատականություն, նույնպես տարբերվող է շրջապատող աշխարհից՝ իր հոգու ներքին մաքրությամբ, ոգեպատիր ինքնությամբ ու մարդկային արժեքների բարձրությամբ: Հեշտ չէ այսպես ապրել, չհաճոյանալ աշխարհիկ կյանքի նյութապաշտ հանրությանը, պահպանվել ու պահպանել շատ կարեւոր մի բան՝ Օրհնությունն Աստծո, որ մանանայի լիությամբ պիտի ծորա գրիչն ի վար ու մատուցի ընթերցողին բնատուր տաղանդի իր առատաձեռնությամբ ստեղծագործելու հրաշքը:

«**Երբ մի քանի բուռ ալյուր էին ճարում, Խանումը թոնիրը կարոտով վառում էր: Դեմքին երանություն էր իջնում, երբ լավաշը զարկում էր թոնրի շրթին: Գերին շատ էր լրջանում, երբ թոնրից հանած տաք լավաշից առաջին պատառը իրեն էին տալիս՝ «Օ՛, մայն գոտ...» (Օ՛, Աստված իմ...): Հետո գերմաներենով անհասկանալի բառեր էր շշնջում: Խանումը իր մի քանի բառ գերմաներենով միտքն ամբողջությամբ հասկանում էր ու հայերեն պատասխանում՝ «Անու՛շ էղնի, լաո՜...»:**

«Էդ անտեր նեմեցին սոված չթողնեք» պատմվածքից է մի հատված: Մի ամբողջ հասարակարգի բարոյական նկարագիր, հայի տեսակը վերարտադրելու կարողություն, մարդու ներքին հակադրությունն իր ներսում, որ ի դրեւ է հանում գրողն իր կատարյալ որակների շնորհիվ.

«**Խանումը երեք նամակի էր սպասում իր ղարիբներից՝ Տիգրան ամուսնուց ու Հայկազ որդուց սիբիրներից եւ մեկ էլ՝ գերի նեմեցից**...»: Երբեմն ուզում ես լռել, էլ ավելի խորքային ընդհանրացումներ անելու համար, համեմատականներով կյանքի խորքերն ընթանալ համամասնելու ներկա իրողությունների ու դարավոր եղելությունների միջնորմը, որ այնքան առանձնանում է ամենավառ փաստականությամբ:

«**Համբո՜, մատաղ էղնիմ քզի, մեր վրեժ չմոռնաս, հարյուր տարի էլ անցնի, մեր հոգին վրեժի կարոտ կմնա**» :

Խորապես ուսումնասիրելով արձակը, աչքաթող անել հնարավոր չէ բանաստեղծի պոեզիան՝ հայոց Մեղրագետի պես անուշ, սասնա տղերքի պես՝ ծուռ, հայոց աղջիկների պես նազելի, ու որն ամբողջանում ու պարուրվում է հայոց բարբառի կախարդիչ մեղեդիներով...

«**Լուսադեմին կժերն առան,**
Դուռ ու երդիկ բացին,
Մշո դաշտեն հարս ու աղջիկ
Դեպ Մեղրագետ գացին:
Մշո՜ աղջիկ, գիշեր գիկամ՝
Ձեր մարգերով օլոր,
Իմծում քզի, բակ մը առնիմ,
Քու մեր մնա մոլոր:
Դանքո՜վ արի, մարգեր թաց է,
Սասնա տղա, պոլոր,
Խաղ մը գըսիս, պաք մը կիդամ,
Չեղնի մնաս մոլոր»:

Վրեժ Սարուխանյանի ստեղծագործություններում արտահայտվում է լրագրողական հմտությունը: Նրա պատմվածքներում արտացոլված է այս ու այն երեւույթի հանդեպ արգահատելի վերաբերմունք, դիպվածներ ու իրողություններ, որոնք իսկական ողբերգություն են մարդկության կյանքում:

«Բումերանգ» պատմվածքում ցնցող դիպվածներ են՝ մարդ արարածի հանդեպ հրեշավոր վերաբերմունքով, որ վերադառնում է բումերանգի օրենքով: Բայց դա քիչ է հազարավոր ճակատագրեր խեղաթյուրող բժշկի համար: Բժիշկը առաքելություն ունի ծառայել մարդկության բարօրությանը: Անպատժելիությունը հանցանք է եւ կործանարար: Այս մասին է խոսում գրողի վերաբերմունքը եւ շեշտադրումը նման հանցակիր գործողություններին՝ սթափություն ներշնչելու եւ վերաբերմունքի համար: Այս գործողությունները ինքնովի չեն ծագում, դրանք շարունակ հովանավորվում են վերեւների կողմից՝ շահութաբեր արդյունքներ գրանցելու համար՝ կործանելով հարյուրավոր կյանքեր եւ նրանց հարազատներին մատնելով չքավոր անտնության: Կորցնել ամենքին եւ ամեն ինչ: Չես ուզում հավատալ, որ դեպքերն իրական կյանքից են:

1915 թվական. եղեռն, ողբ, կոտորած, մասսայական տեղահանություններ, վայրագություն՝ թուրքական, քրդական, ներդավաճանություններ, շինծու մտերմություն, մոլորություն, փրկությու՞ն, թե՞ քաղաքական շահ, չմարդկային գործիչներ բոլոր ժամանակներում, անհագուրդ է ողբ ու արյուն, ցավ ու մահ տեսնելու մղումը եւ այդ ընթացքին շատ լավ է տիրապետում կառավարող աշխարհը, որտեղ մարդը փոքրացել է, որտեղ առաջնայինը հատուկ նպատակներն են՝ տիրելու, շորթելու, միեւնույն լարի վրա տարբեր ու տարօրինակ խաղեր հորինելու, ծաղրելու, բայց անպայմանորեն հաղթելու մոլուցքով: Իշխանությունն արատավոր ու վտանգավոր երեւույթ է, նրանից կախված են հազարավոր մարդկային ճակատագրեր:

Եվ այսպես՝ հայրենասիրությամբ, մարդասիրությամբ, բազում հեռուստատեսային ծրագրերի համակարգումով, հասարակական գործունեություն, իհարկե անհնար էր չանդրադառնալ քաղցրախոս այս մարդու գերակտիվ գործունեությանը: Իր ազգի ճակատագրով ապրող գրողը ահռելի գրական ժառանգություն է ստեղծել՝ մանրամասնելով պատմության մութ էջերում թաքնված կենդանի իրողություններ:

Հատկանշական է գրողի առաքինի ու բարո վերաբերմունքը՝ մարդու, կյանքի հանդեպ, հավատն ու մեծ սերն իր ժողովրդին ու նրա հարատեւող անվերջությանը: Կյանքը հավատ ներշնչելով է կյանք: Մարդու հանդեպ մարդու սիրով է պայմանավորված ողջ մարդկային գոյությունը: Գրողը ականտեսն է ժամանակի խեղաթյուրող բարքերի, անպատասխանատու գործելակերպից մինչ պահպանողականություն, որից այն կողմ ընդամենը մի քայլ է՝ հոգեբանական, լրատվական, անհանդուրժողական պայքար՝ ամենուրեք: Անհրաժեշտ է համբերատարորեն հետեւողական լինել, ինքնապահպանվելով դուրս պրծնել անորոշության ու մոլորության ճիրաններից եւ Անկախության հրաշքը կենդանի լույսի մեջ պահել, մինչ կզուլալվեն ջրերը, մինչ կխոսի կամքն Աստվածային՝ լույս, սեր ու հավատ ներշնչելու երկնային շնորհներ կրող ժողովրդի անվերջությանն ընդառաջ...

Վրեժ Սարուխանյանի ստեղծագործական աշխարհը վերլուծելիս հարստանում ես պատմական ճշմարտությամբ, մարդկային վարքագծի էթիկայով ու մտահոգիչ՝ խոր խոհականությամբ:

Լենա Հարությունյան
Բյուրական

ԳԵՂԱՄԱ աշխարհ

Լրատվական գործունեություն իրականացնող «Գեղարքունիք» թերթի խմբագրություն» ՓԲԸ: Հասցեն՝ ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7
էլ.հասցե՝ khosrov1@yandex. ru
Գլխավոր խմբագիր՝ Խոսրով Խլղաթյան
հեռ. բջջ. 094022692

Վկայական՝ 02 Ա 050560: Գրանցման համարը՝ 25.120.00834:
Տրված 07.05.2001թ.: Տպաքանակը՝ 1000: Ծավալը՝ 2 մամուլ:
Թողարկման օրը՝ 25. 07. 2025 թ.:
Տպագրվում է «Սամարկ» ՍՊԸ տպարանում:
«Գեղամա աշխարհ» թերթի բոլոր համարներին կարող եք ծանոթանալ https://tert.nla.am կայքում: